

# ՍՈՑԻՈԼՈԳԻԱ

## ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԵԿԼԱԲԱՆՈՂ ՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

### ՍՏԵՓԱՆ ԱՂԱԲԱԲՅԱՆ

Ազգային ինքնությունը այնպիսի երևույթ է, որն ամբողջականորեն արտահայտում է տվյալ ազգին բնորոշ յուրահատկությունները: Ազգային ինքնության ձևավորումն անընդհատ գործընթաց է, որը միտված է ազգի կողմից իդեալականացված նպատակներին ու արժեքներին հասնելուն և մարտահրավերներին դիմակայելուն:

Ազգային ինքնության պահպանումն ու զարգացումն անչափ կարևոր իրողություններ են ազգի համար, որովհետև այն մի գործոն է, որը միավորում և համախմբում է ողջ ազգին, նրան տալիս է հստակ դիմագիծ, որով էլ այն տարբերվում է այլ ազգերից: Ազգային ինքնության կորուստը հանգեցնում է տվյալ ազգի կենսապահովման պայմաններից առնվազն մեկի վերացմանը, իսկ ազգային ինքնության ճգնաժամը ստիպում է ոչ միայն լուծել ինքնության խնդիրները, այլև խաթարում տվյալ ազգի իդեալականացված նպատակներին հասնելու ճանապարհները:

Ներկա աշխարհում տեղի են ունենում մի շարք գլոբալ և լոկալ փոփոխություններ և ազգային ինքնության պահպանման և ամրապնդման հիմնախնդիրը դառնում է առաջնային, իսկ դրա ուսումնասիրությունը կարևորվում է հատկապես սոցիոլոգիայի շրջանակներում:

Սոցիոլոգիայում ընդհանուր առմամբ ձևավորվել են ազգային ինքնությունը մեկնաբանող մի շարք ուղղություններ, սակայն առավել ուշագրավ են պարադիգմալ հետևյալ երեք ուղղությունները՝ պրիմորդիալիզմ, կոնստրուկտիվիզմ, պոստմոդեռնիզմ: Հատկանշական է այն հանգամանքը, որ տեսական այս ուղղությունների դասակարգման հիմքում կարող ենք դիտարկել ազգային ինքնության այս կամ այն բնութագրիչի կարևորությունը:

Ազգային ինքնությունը ենթադրում է մի շարք բնութագրիչներ, որոնց միջոցով հնարավոր է ազգային ինքնություն ունեցող որոշակի խմբի անդամներին տարբերակել մեկ այլ խմբի պատկանողներից: Տարբեր ժամանակահատվածներում նմանատիպ գործոնները առանձնացել են միմյանցից՝ իրենց տեղը զիջելով առավել մրցունակ մոտեցմանը. եթե սկզբնական շրջանում մեծ կարևորություն էր տրվում հատկապես կենսաբանական և մշակութային գործոններին, ապա հետագայում ձևավորվեցին կառուցակցման, իսկ ավելի ուշ՝ նաև ապակառուցակցման և վերակառուցակցման գաղափարները: Հնարավորություն առաջացավ ազգային ինքնության առանձնահատկությունները դիտարկելու տվյալ ժամանակաշրջանի համատեքստում:

Դ. Միլլերը ազգային ինքնությունը բնորոշում է այսպես. այն ձևավոր-

վում է ընդհանուր հավատքի և փոխադարձ պարտավորությունների շուրջ, ունի երկարաժամկետ պատմական գոյություն, բնութիւնով ակտիվ է, կապված է որոշակի տարածքի հետ և այլ հանրույթներից տարբերվում է իր հասարակական յուրահատուկ մշակույթով<sup>1</sup>:

Ազգային ինքնության բնութագրիչներին անդրադարձել են տարբեր հեղինակներ, սակայն այդ բնութագրիչների առավել հանգամանալից նկարագրությունը ներկայացրել է Մոնտեսքատ Գուբեռնոն իր՝ «Ազգերի ինքնությունը» աշխատության մեջ: Գուբեռնոն առանձնացնում է ազգային ինքնության հետևյալ բնորոշիչները՝ հոգեբանական, մշակութային, տարածքային, պատմական և քաղաքական, որոնց յուրահատկությունների միջոցով էլ բնութագրվում են տարբեր ազգերի ինքնությունները:

Ազգային ինքնության *հոգեբանական* ասպեկտը հիմնվում է այն գաղափարի վրա, որ նույն ազգի ներկայացուցիչները միմյանց կապված են հուզական թելերով: Դրանք երբեմն լինում են անբացատրելի: Նման կապվածությունը կարող է նույնիսկ չդրսևորվել և թաքնված մնալ այնքան ժամանակ, քանի դեռ չեն ստեղծվել նպաստավոր պայմաններ: Նման պայմաններ են ազգի գոյության և բարգավաճման հանդեպ սպառնալիք ենթադրող իրավիճակներն ու ռիսկային գործոնները: Քոնորը, կարևորելով ազգային ինքնության հոգեբանական ասպեկտը, նշում է, որ ազգը մարդկանց մեծ խումբ է, որը հիմնված է ազգի հանդեպ յուրաքանչյուր անձի նվիրվածության և ազգային հավատարմության վրա<sup>2</sup>: Նվիրվածության և հավատարմության առաջացման պատճառն այն է, որ ազգի ներկայացուցիչներն ունենում են այնպիսի զգացում, որը վկայում է միմյանց հետ ազգակցական կապերի մասին: Այսպիսով, ազգային ինքնության հոգեբանական տեսանկյունից ազգը կարելի է դիտարկել որպես մեծ ընտանիք, որի անդամները միմյանց հետ կապված են հուզական կապերով: Այնուամենայնիվ, ոչ միշտ է, որ այդ կապերը սերտ են լինում կամ առկա են լինում բոլորի մեջ:

Ազգային ինքնության ուսումնասիրության ընթացքում կարևորվում է նաև *մշակութային* բնորոշիչը, որը կարելի է մեկնաբանել որպես մշակութային ընդհանուր արժեքների, հավատալիքների, լեզվի, գաղափարների, ավանդույթների առկայություն և փոխանցում սերնդեսերունդ: Ազգային ինքնության մշակութային ասպեկտի վերաբերյալ կարող ենք նշել հետևյալը.

- Ընդհանուր մշակույթը նպաստում է միասնականության դրսևորմանը այն մարդկանց միջև, ովքեր կրում են այդ մշակույթը: Ընդհանուր մշակույթը նաև թույլ է տալիս միմյանց ընդունել որպես միևնույն ազգի ներկայացուցիչ և դրանով իսկ տարբերվել ու տարբերակվել այլ ազգերից:

- Ազգային ինքնության մշակութային ասպեկտի առանձնահատկությունը նաև այն է, որ տարբեր ազգերի ներկայացուցիչներ սոցիալականացվում են տարբեր մշակույթների շրջանակում, ինչն էլ ավելի է շեշտում ազգային ինքնության կարևորությունը:

Անհրաժեշտ է նաև նշել, որ լեզվի դերը ևս շատ մեծ է ազգային ինքնության ձևավորման գործում, քանի որ լեզուն նպաստում է հաղորդակց-

<sup>1</sup> Տե՛ս **Смит Э.** Национализм и модернизм. М., 2004, էջ 382:

<sup>2</sup> Տե՛ս **Guibernau M.**, The identity of nations, Cambridge: Polity Press, 2007, էջ 12:

մանը, իսկ միևնույն լեզուն ունեցողները ավելի հեշտ և արդյունավետ են հաղորդակցվում միմյանց հետ, ինչը ևս ապահովում է նրանց միասնականությունը: Յետևաբար, լեզուն էականորեն ազդում է ազգային ինքնության վրա՝ նպաստելով վերջինիս ամրապնդմանը:

Ազգերը սովորաբար հիշում և նշում են ազգի համար փառապանծ իրադարձություններն ու հաջողությունները: Դա վկայում է այն մասին, որ ազգային ինքնության ուսումնասիրության ընթացքում կարևորվում է նաև ազգի *պատմությունը*: Այն ազգերը, որոնք ունեն բավականին հին պատմություն, հակված են դա մեկնաբանելու որպես ճկունության, հզորության և նույնիսկ այլ ազգերի հանդեպ գերակայության նշան<sup>3</sup>: Այս փաստն էականորեն ազդում է ազգային ինքնության վրա: Միևնույն ազգի ներկայացուցիչներն անտարբեր չեն նաև ցավալի և ողբերգական իրադարձությունների հանդեպ, որոնք տեղի են ունեցել ազգի հետ: Ավելին, ազգը հաճախ միավորվում է նմանատիպ իրադարձությունների ընթացքում, իսկ հետագայում նաև ոգի առնում այդ իրադարձություններից: Օրինակ՝ հայերը իրենց հիշողության մեջ պահպանում են ցեղասպանության իրադարձությունները, իսկ Միացյալ Նահանգները մշտապես հարգանքի տուրք է մատուցում 2001թ. սեպտեմբերի 11-ի զոհերին: Ազգի պատմության որոշ իրադարձություններ, այսպիսով, համալրում են ազգի կոլեկտիվ հիշողությունը՝ հիմք հանդիսանալով ազգային ինքնության ամրապնդմանը, եթե այդ հիշողությունները նպաստում են տվյալ ազգի ներկայացուցիչների ինքնագնահատականի և ինքնահարգանքի բարձրացմանը: Յուրաքանչյուր ազգ փորձում է գտնել և շեշտել այն առանձնահատկությունները, որոնք թույլ են տալիս տվյալ ազգը զատել մյուս ազգերից և նույնիսկ սահմանել նրա գերակայությունը մյուսների նկատմամբ:

Այսպիսով, որպես ազգերի առանձնահատկություն հանդես է գալիս պատմությունը, որը հնարավորություն է ստեղծում տվյալ ազգի ներկայացուցիչներին իրենց համարելու յուրօրինակ և յուրահատուկ, ինչն էլ փաստում է այն մասին, որ ազգային ինքնության կարևորագույն ասպեկտներից մեկը հենց պատմականն է:

Ազգային ինքնության *տարածքային* բնորոշիչը կարևորվում է այն տեսանկյունից, որ գոյություն ունի ազգերի հստակ բաժանում՝ պայմանավորված տվյալ ազգի բնակության վայրով:

Ժամանակակից պետության հիմքում ընկած են ազգի ինքնորոշման և ժողովրդավարության գաղափարներ, որոնք կարևոր նշանակություն ունեն ազգի ինքնության *քաղաքական* ասպեկտի համար: Ազգային ինքնության վերաբերյալ գրականության մեջ երբեմն զարգացնում են այն տեսակետը, որ ազգային ինքնության քաղաքական ասպեկտը կապված է ժամանակակից ազգ-պետության հետ: Սակայն պետք է նշել, որ այդ կարծիքն այնքան էլ ճիշտ չէ, քանի որ այդ տեսակետների շրջանակներում «պետություն» և «ազգ» հասկացությունները նույնացվում են, այնինչ ազգային ինքնությունը վերաբերում է այն մարդկանց, ովքեր պատկանում են նույն ազգին. ընդ որում, նույն ազգի ներկայացուցիչները կարող են և չունենալ պետություն, բայց դա հիմք չէ պնդելու, որ նրանք չունեն ազգություն:

<sup>3</sup> Տե՛ս Guibernau M., նշվ. աշխ., էջ 13-14:

Ազգային ինքնության քաղաքական ասպեկտը բնութագրում է նաև պետության կողմից նախաձեռնվող և իրականացվող այն քաղաքականությունը, որն ուղղված է ազգային միասնականության պահպանմանը և ազգային ինքնության ամրապնդմանը: Իհարկե, իրավիճակը մի փոքր այլ է պետականությունը չունեցող ազգերի համար: Նման դեպքերում տվյալ ազգը քաղաքական ասպեկտում կարող է ազգային ինքնությունը չունենալ, կամ վերջինիս առկայության դեպքում անգամ դրան կարող է հակադրվել այն ազգի քաղաքական ասպեկտը, որի քաղաքացիներն են տվյալ ազգի ներկայացուցիչները:

Այսպես, օրինակ, Գուբեռնոն առանձնացրել է ազգային ինքնության ընդհանուր բնութագրիչները, որոնց կարևորությունը ոչ միայն այն է, որ վերջիններս ներկայացնում են ազգային ինքնությունը բնութագրող հիմնական առանձնահատկությունները, այլև, որ այդ բնութագրիչներն ընկած են ազգային ինքնությունը մեկնաբանող սոցիոլոգիական տեսությունների դասակարգման հիմքում:

Եթե փորձենք պարզել, թե որ բնութագրիչն է ընկած ազգային ինքնությունը մեկնաբանող սոցիոլոգիական տեսություններից յուրաքանչյուրի հիմքում, ապա պետք է նշել, որ պրիմորդիալիստական մոտեցման հիմքում կարող ենք պայմանականորեն առանձնացնել ազգային ինքնության մշակութային և հոգեբանական բնութագրիչները:

Պրիմորդիալիզմի շրջանակներում հատկապես կարևորվում են կենսաբանական և գենետիկական կապերը, ինչպես նաև մշակութային փոխկապվածությունը: Համաձայն պրիմորդիալիստական ուղղության՝ էթնիկ խմբերը, ազգերը և ռասայական խմբերը կապված են բարեկամական կապերով և գենետիկ վերարտադրության արդյունք են<sup>4</sup>: Պրիմորդիալիստական ուղղության ներկայացուցիչները միևնույն ժամանակ կարևորում են մշակութային ընդհանրությունների դերը ազգային ինքնության ձևավորման գործում: Սարդիկ, որ տիրապետում են որոշակի մշակութային առանձնահատկությունների, կապվում են իրար հետ ավանդույթների, լեզվի, մշակութային արժեքների և միջերի միջոցով: Էթնիկ ծագման մասին միջերը, որպես կանոն, ճշմարտության հատիկ են պարունակում, բայց սովորաբար դրանք զարգանում և իդեալականացվում են ըստ ազգի կենսափորձի և իդեալների: Այդ առումով Կ. Գիրցը նշում է, որ ազգը ձևավորվում է հետևյալ բնութագրիչների միջոցով.

- էթնիկություն, որը հիմնվում է համընդհանուր զգացման, լեզվի, միջերի վրա,

- ընդհանուր տարածք, որը աշխարհագրականորեն ոչ միատարր տարածքներում կարող է առաջացնել լուրջ բարդություններ,

- կրոն<sup>5</sup>:

Պրիմորդիալիստական ուղղության շրջանակներում կարող ենք առանձնացնել նաև ազգային ինքնության տարածական բնութագրիչի կարևորությունը: Այդ առումով հիշատակենք Վան դեր Բերգենի տեսությունը, համաձայն որի՝ էթնիկ խմբերը այլ խմբերից տարանջատվում են սո-

<sup>4</sup> Տե՛ս СМИТ Э., նշվ. աշխ., էջ 271:

<sup>5</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 281:

ցիալական և տարածական սահմանների հստակ պահպանմամբ<sup>6</sup>:

Այսպիսով, ըստ պրիմորդիալիզմի ներկայացուցիչների՝ ազգերի ինքնագիտակցությունը պայմանավորված է այնպիսի երևույթներով, ինչպիսիք են էթնիկությունը, արյունը, լեզուն, տարածքը, կրոնը և ավանդույթները:

*Կոնստրուկտիվիստական* մոտեցման ներկայացուցիչները գտնում են, որ ինքնությունները տարբերվում են ժամանակի և տարածության մեջ՝ ըստ իրենց սոցիալական պայմանների և փոփոխությունների՝ հանգամանքների, որոնց հանդիպում է տվյալ խումբը, ինչպես նաև՝ ըստ խմբի անդամների ներգրավվածության աստիճանի այնպիսի գործընթացներում, ինչպիսիք են ինքնությունների կառուցումը և վերակառուցումը, դրանց սահմանների որոշումը, իմաստային սիմվոլների առաջադրումը, անցյալի մեկնաբանումը, ներկա իրավիճակի ընկալումը և ապագայի պատկերացումների ձևավորումը: Ըստ այս ուղղության՝ ազգային ինքնության ձևավորումը երկարատև և շարունակական գործընթաց է, որը կայուն է միայն որոշակի ժամանակահատվածում, և սոցիալ-տնտեսական, քաղաքական ու մշակութային փոխակերպումները հանգեցնում են ազգային ինքնության փոխակերպման: Հետևաբար, կոնստրուկտիվիստական՝ որպես ազգային ինքնությունը մեկնաբանող տեսական ուղղության հիմքում կարող ենք առանձնացնել ազգային ինքնության պատմական բնութագրիչի կարևորությունը, քանի որ պատմությունը միավորում է միևնույն ազգի ներկայացուցիչներին, ձևավորում է նրանց կոլեկտիվ հիշողությունը և պայմանավորում է ապագայի հանդեպ վերաբերմունքը:

Այս ուղղության շրջանակներում իր կարևոր դերն ունի նաև ազգային ինքնության քաղաքական բնութագրիչը, քանի որ, այս մոտեցման համաձայն, պետությունը վարում է որոշակի քաղաքականություն՝ ուղղված ազգային ինքնության ձևավորմանը, փոփոխմանը և ամրապնդմանը և ունի դրանք իրագործելու որոշակի նպատակներ ու միջոցներ: Այսինքն՝ պետությունը ինքնությունը դիտում է որպես մի կառույց, որը կարելի է փոփոխել, հարմարացնել ապագայի նախագծերին: Եվ ինչպես նշում է Է. Թիրյաքյանը, «Ազգը ինտերսուբյեկտիվ և դինամիկ միավոր է, որը կրում է անցյալի կոլեկտիվ հիշողությունները և ապագայի կոլեկտիվ նախագծերը, ազգը ֆիքսված փաստ չէ, այլ զարգացող կառույց է»<sup>7</sup>:

Ազգային ինքնության քաղաքական բնութագրիչի դերը կարևորվում է նաև *պոստմոդեռնիզմի* շրջանակներում, որը ազգային ինքնությունը մեկնաբանող պարադիգմալ ուղղություններից է: Պոստմոդեռնիստական մոտեցումը ներառում է երեք հիմնական դրույթ՝

1. Բնակչության ժամանակակից բնական շարժերը ազդում են ազգային պետության հեռանկարների և հատկապես ազգային ինքնության կորստի ու բազմամշակութայնության ձևավորման վրա:

2. Այն հիմնական նորմատիվ և քաղաքական բանավեճերը, որոնք ցույց են տալիս, թե ինչպես է քաղաքացիական և էթնիկ ազգայնականությունը ազդում քաղաքացիության և ազատության վրա, ինչպես նաև՝ դրանց կա-

<sup>6</sup> Տե՛ս **van den Berghe P.**, Race and ethnicity: a sociobiological perspective//Ethnic and racial studies, vol. 1, issue 4, Routledge USA, 1978, էջ 403-404:

<sup>7</sup> Տե՛ս **Tiryakian E.**, Modernizing german national identity//Die Ordnung der Gesellschaft, Frankfurt am Main, Lang, 2005, էջ 232-234:

պը լիբերալ ժողովրդավարության հետ:

3. Գլոբալացման և պոստմոդեռնիստական վերազգային նախագծերի միտումների ազդեցությունը ազգային սուվերենության և ազգային ինքնության վրա<sup>8</sup>:

Ներկա ժամանակների գլխավոր մարտահրավերներից կարելի է համարել գլոբալ միտումների ազդեցությունը ինքնության, մասնավորապես ազգային ինքնության վրա: Չի կարելի չնկատել, որ, սկսած 20-րդ դարի երկրորդ կեսից, սկսել է խախտվել հավասարակշռությունը ավանդականի և նորի միջև, և էական փոփոխություններ են տեղի ունենում մարդկային գործունեության բոլոր ոլորտներում: Գլոբալացման պայմաններում ընթանում է ինքնության փոխակերպում: Գլոբալացումը ծնում է ազգերի և երկրների փոխկապվածության ու փոխազդեցության նոր ձևեր, որոնք էլ փոխում են ազգային ինքնության վերաբերյալ ավանդական պատկերացումները: Գլոբալացումն ակտիվ ազդեցություն է թողնում մեր ազգային, մշակութային ինքնագիտակցության վրա և շատ դեպքերում քայքայում է այն: Գաղտնիք չէ, որ գլոբալացումը մշակութային առումով հանգեցնում է բազմազանության: Բավականին արագ ընթացող ներկայիս գլոբալ փոփոխությունները՝ ի դեմս գիտատեխնիկական նորարարությունների, զգալի տեղաշարժեր են առաջացնում բոլորիս ինքնության մեջ: Գլոբալացման ներկա պայմաններում բազմաթիվ մասնագետներ խոսում են ազգային ինքնության ճգնաժամի մասին: Ընդհանուր առմամբ կարելի է առանձնացնել չորս գործընթաց, որոնք անմիջական ազդեցություն ունեն ազգային ինքնության, ազգային ինքնության ճգնաժամի սրման վրա: Դրանք են՝ ժողովրդավարացումը, տեղեկատվականացումը, մշակութային ստանդարտացումը և արժեքային ունիվերսալացումը<sup>9</sup>:

Այսպիսով, համաձայն պոստմոդեռնիզմի ներկայացուցիչների, ժամանակակից հասարակություններում ազգային ինքնության ձևավորման և վերափոխման վրա էական ազդեցություն են ունենում այնպիսի գործընթացներ, ինչպիսիք են գլոբալացումը, ինտեգրումը վերազգային կառույցներին, միգրացիոն խոշոր հոսքերը և այլն: Այս տեսանկյունից ազգային ինքնության քաղաքականության բնույթն ու առանձնահատկությունները կանխորոշվում են պետության վարած ինչպես ներքին, այնպես էլ արտաքին քաղաքականությամբ:

Այսպիսով, եթե փորձենք ամփոփել ազգային ինքնությունը մեկնաբանող սոցիոլոգիական մոտեցումների առանձնահատկությունների վերլուծությունը, կարող ենք նշել, որ այդ տեսությունների հիմքում ընկած է ազգային ինքնության այս կամ այն բնութագրիչը՝ առանցքային դեր խաղալով ազգային ինքնության ուսումնասիրման գործում: Այնուամենայնիվ, ժամանակակից հասարակություններում ոչ լիարժեք են դառնում ազգային ինքնության ուսումնասիրումը և մեկնաբանումը վերոհիշյալ ուղղություններից միայն որևէ մեկի շրջանակներում, քանի որ այդ հասարակություններում տեղի ունեցող գլոբալ գործընթացները ջնջում են պետությունների և ազգերի վերաբերյալ մինչև այժմ եղած պատկերացումները, և

<sup>8</sup> Տե՛ս Смит Э., նշվ. աշխ., էջ 366-367:

<sup>9</sup> Տե՛ս Кортунов С. В. Глобализация и национальная идентичность // "Вестник аналитики: Журнал аналитических материалов". М., 2007, էջ 109-124:

ըստ այդմ կարևորություն է ստանում ազգային ինքնության ուսումնասիրման համակարգված մոտեցումը, որը կընդգրկի այս հիմնական մոտեցումների առանձնահատկությունները՝ թույլ տալով կատարելու առավել ամբողջական եզրակացություններ:

**Բանալի բառեր** – *ինքնություն, ազգային ինքնություն, պրիմորդիալիզմ, կոնստրուկտիվիզմ, պոստմոդերնիզմ, գլոբալացում*

**СТЕПАН АГАБАБЯН** – *Анализ современных социологических подходов к изучению национальной идентичности.* – В современной социологии сформировался ряд концепций относительно национальной идентичности. В статье рассмотрены три парадигмальных подхода к изучению её сути, особенностей и характеристик. Исследуется также условная связь между характеристиками национальной идентичности и критериями классификации упомянутых подходов.

**Ключевые слова:** *идентичность, национальная идентичность, примордиализм, конструктивизм, постмодернизм, глобализация*

**STEPAN AGHABABYAN** – *The Analysis of Sociological Approaches Studying National Identity.* – National identity has always been in the close attention of scientists and researchers. Sociology is not an exception. Various sociological approaches have been designed for analyzing the national identity and the peculiarities of its construction.

This article is directed towards studying the main concepts of the three basic approaches of sociology that analyze the entity, essential characteristics and peculiarities of national identity. The interrelatedness of the characteristics of national identity and the criteria for classification of sociological approaches are also observed in this article. Especially those characteristics are considered to be the main criteria of the classification of the sociological theories of national identity.

**Key words** – *identity, national identity, primordialism, constructivism, postmodernism, globalization*